

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍՍԱԳԻՐՔ

~~Յ.~~
3

ԳԼՈՒԽ V

355.23
4-33

ՊԵՏԶՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1932

355.23

4-33

1 MAR 2010

ԽՍՀՄ ԳՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ ՀԽՍՀ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ
ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ)

ԳԼՈՒԽ V

ՊԵՏԶՐԱՏ 1932

ՅԵՐԵՎԱՆ



ԻՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ՔԱՂԱՍՏԱԳԻՐՔԻՑ

Քաղաքացիքը կազմված է ԲԳԿԻ ՊՈԼԻ-ի 1931-32 թ. ձևով 2րդ անգամի
փաղաքացիականների ծրագրի համեմատ:

Դասագրքի խնդիրն է ոգևել կարմիր բանակայինն վարժան հնարավոր է խո-
րապես յուրացնելու փաղաքացիականները:

Յուրաքանչյուր փաղաքացիականից առաջ կարմիր բանակայինը պետք է
կրտսեր հրամատարի ղեկավարությամբ և ինժեներության ուշադրությամբ կարգա-
այն յերեսները, վար ցույց կտա խմբակավարը:

Կարգացածը լավ հիշելու համար, ամեն մի կտորը կարդալուց հետո պետք
է պատասխանել բանավար կամ գրավոր կոնտրոլ հարցերին, վար տպված են շա-
տառով հոգիվածի վերջում:

Ցեր է վորքեն բան պարզ չէ կամ փնհասկանալի չէ, անհրաժեշտ է հարցնել
կրտսեր հրամատարին, խմբակավարին կամ փաղեկին:

Դասագրքից պետք է ոգուվել նաև փաղաքացիականների գրույցների ժա-
մանակ, կարդալով առանձին կտորներ (ցիտատներ), վերլուծելով դիտարաններ,
կարդալ քվակամ տվյալներ, նկարներ, սխեմաներ:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԽՈՐ- ՅՈՒՐԴՆԵՐԸ

Սորհրդային Միության մեջ արդեն տասնութինգ տարի յե ինչ
բանվոր դասակարգը ամուր կերպով պահում է իշխանությունն
իր ձեռքում: Պրոլետարիատի դիկտատուրան նվաճված է 1917
թվի հոկտեմբերին: Պրոլետարիատի դիկտատուրան ազատա-
գրեց Ռուսաստանի աշխատավոր մասսաներին կալվածատերերի,
կապիտալիստների և կուլակների ճնշումից: Սորհրդային Միու-
թյան բանվոր դասակարգն իր իշխանությունն ողտադործում է
վերջնականապես վոչնչացնելու համար ջախջախված կապիտա-
լիստական տարրերի մնացորդներին մեր յերկրում, ավարտելու
կատարյալ սոցիալիստական հասարակության կառուցումը և
այդպիսով ապահովելու պրոլետարական հեղափոխության հաղ-
թանակը ամբողջ աշխարհում:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԴԵՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹՅՈՒՆՆ Ե

ԻՆՉ Ե ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական յերկրներում արտադրության բոլոր մի-
ջոցները՝ գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հողը,
անտառները և ջրերը պատկանում են մի խումբ կապիտալիստ-
ների, բանկիրների և խոշոր կալվածատերերի—հոգատերերի:

Պետությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ տնտեսապես ամենից
ուժեղ դատակարգերի տիրապետությամբ կազմակերպույրվումը:
Այն դասակարգը, վորը տիրում է արտադրության հիմնական
միջոցներին, հանդիսանում է միևնույն ժամանակ քաղաքակա-
նապես տիրող դասակարգ, աշխնքն՝ աշխատի դասակարգ, վորի
չահերի համար է գործում ամբողջ պետական ապարատը: Կապի-
տալիստական հասարակության սոցիալականներում այդպիսի դասա-
կարգ է հանդիսանում բուրժուազիան:

Կարմիր բան. քաղաքա.—2

Կապիտալիստական յերկրներում պետական ապարատը, այն է բանակը, վոստիկանությունը, պարլամենտը, դատարանը, յեկեղեցին, դպրոցը, մամուլը պահվում է բուրժուազիայի կողմից ի հաշիվ այն շահույթների և հարկերի, վոր նա քամում է աշխատավորներին: Այդ ապարատի ոգնությունը կապիտալիստներն իշխանությունը պահպանում են ընակչության մեծամասնության վրա և ապահովում են բանվորներին ու բոլոր աշխատավորներին ճնշելու և շահագործելու հնարավորությունը:

Այսպես ուրեմն՝ բուրժուական պետությունը հանդիսանում է բուրժուազիայի դիկտատուրայի զենքը, մի խումբ կապիտալիստների մեքենան՝ տասնյակ միլիոնավոր բանվորներին և հարյուր միլիոնավոր աշխատավորներին ճնշելու համար: Բուրժուական պետությունը մի զենք է շահագործողների ձեռքին, վորից նրանք սգտվում են իրենց տիրապետությունը պահելու և ամրացնելու համար:

Բուրժուական պետությունն ունի զանազան ձևեր. ինչպես որինակ՝ սահմանադրական, միապետական, դեմոկրատական հանրապետություն կամ Փաշիստական ռեժիմ. սրանք չեն փոխում այդ պետության դասակարգային եյությունը: Անգլիան կոչվում է սահմանադրական միապետություն: Այնտեղ այժմ ել գոյություն ունի թագավորը: Նրա իշխանությունը սահմանափակված է պարլամենտով, վորը գումարվում է այսպես կոչված ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Ֆրանսիան համարվում է դեմոկրատական հանրապետություն: Իտալիայում և Լեհաստանում գոյություն ունի Փաշիստական ռեժիմ: Սակայն թե՛ սահմանադրական միապետության մեջ — Անգլիայում, թե՛ այսպես կոչված դեմոկրատական հանրապետության մեջ — Ֆրանսիայում և թե՛ Փաշիստական Իտալիայում ու Լեհաստանում, ամեն տեղ իշխանությունը պատկանում է բուրժուազիային:

Լենինը չառ անդամ եր ցույց տալիս, վոր՝

«ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԴԻՄԱԿԱՆ ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒՄ Ե ՎՈՋ ԱՅԼ ԻՆՉ, ՅԵԹԵ ՎՈՋ ՎՈՐՊԵՍ ՄԻ ՄԵՐԵՆԱ ՃՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ», ՎՈՐ՝

«ՎՈՋ ՄԻ ՏԵՂ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՅՆՊԵՍ ԱՆԱՄՈԹԱԲԱՐ (ԿՈՊՏՈՐԵՆ) ՅԵՎ ԱՆԽՆԱ ՉԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՀԱՏԿԱՊԵՍ ԱՅԻ ՅԵՐԿԱՆԵՐՈՒՄ»:

Ինչի՞ պետք է պետությունը շահագործողներին:

Ինչո՞ւ կապիտալիստական պետություններում իշխանությունը բուրժուազիայի ձեռքին է գտնվում:

ԻՆՉ Ե ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Բուրժուազիան և նրա արբանյակները՝ սոցիալ-Փաշիստները վարագործում են բուրժուական պետության դասակարգային բնույթը: Նրանք ասում են, վոր բուրժուական պետություններում ծաղկում է դեմոկրատիան, վորի գոյության ժամանակ իրականացվում է ամբողջ ժողովրդի իշխանությունը: Նրանք ասում են՝ քանի վոր կապիտալիստական պետությունների մեծամասնությունը դիվին կանգնած է պարլամենտը, այսինքն՝ «ժողովրդի ներկայացուցիչներից» ընտրված ժողովը, և կառավարությունն ել ընտրվում է այդ պարլամենտի կողմից, յերբ այնտեղ, յերթե, գոյություն ունի խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և ընդհանուր ընտրական իրավունք, ապա ուրեմն բանվոր դասակարգը, յերթե, հեշտությամբ և առանց հեղափոխության կարող է իշխանության գլուխ անցնել: Նրան հարկավոր է միայն ոգտվել դեմոկրատական «ազատություններից» և պարլամենտում ստանալ տեղերի (ձայների) մեծամասնությունը:

Այդ բոլոր դատարկահոսությունները «ժողովրդի ներկայացուցիչների», «ազատությունների» մասին ստախոսություն են և ուրիշ վոչինչ: Այդ ստախոսության նպատակն է հեղափոխական ճանապարհներից հանել բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին, այդ ստախոսության նպատակն է հաստատել բուրժուազիայի տիրապետությունը, պահպանել նրա համար թալանի ու շահագործման աղտությունը:

Յեվ իսկապես, կարո՞ղ են արդյոք պրոլետարիատն ու աշխատավոր մասսաները կապիտալիստական յերկրներում իրենց շահերի համար ոգտագործել դեմոկրատական «ազատությունները»: Կարո՞ղ է արդյոք կապիտալիստական յերկրների ընակչության շահագործվող մեծամասնությունը իշխանության գլուխն անցնել առանց հեղափոխության, ոգտագործելով այսպես կոչված ընդհանուր ընտրական իրավունքը: Իրո՞ք ժամանակակից բուրժուական պետությունները դադարել են վորպես գործիք ծառայելուց բուրժուազիայի ձեռքին՝ աշխատավորներին ճնշելու համար և յերթե «ազատության, հավասարության և յկրթալքության» թաղավորությունն է տիրում:

Իհարկե վոչ:

Որինակ՝ ինչ խոսք կարող է լինել մամուլի ազատության մասին կապիտալիզմի ժամանակ, յերբ ապարանը, թուղթը, ռեկլամի գործը, թերթի տարածման ապարատն ամբողջությամբ կապիտալիստների ձեռքին են գտնվում: Կոմունիստական մամուլը հրատարակվում է գաղտնի տպարաններում, իսկ այնտեղ, վորտեղ նա ազատ գոյություն ունի, բուրժուազիան ամեն կերպ հետապնդում է նրան: Բուրժուական կառավարությունները տուգանքներ են դնում

կոմունիստական թերթերի վրա, ամեն տեսակ արգելքներ են ստեղծում նրանց տարածման համար, բանդերն են նստեցնում նրանց խմբագրերին, փակում են այդ թերթերը:

Ինչ խոսք կարող ե լինել ժողովների ազատության մասին կապիտալիզմի ժամանակ, յերբ ժողովների դահլիճները, ակումբները, թատրոնները, տները պատկանում են բուրժուազիային, իսկ բանվորներին (մանավանդ կոմունիստներին) այդ չենքերը չեն հանձնում, հաճախ նույնիսկ վարձով: Յեթե բանվորները, այսպես թե այնպես, հավաքվում են փողոցներում, պարկերում, հրապարակներում և այլն, բուրժուական իշխանություններն այդպիսի բանվորական ժողովների ու ցույցերի դեմ են հանում իրենց վտանգավոր և փոփոխական փոհմաններին, բաց են թողնում արտասովաբեր դադեր, կանգ չեն առնում նաև զինքի դործադրության առաջ:

Բուրժուական գրչակները խոսում են նույնպես ընդհանուր ընտրական իրավունքի մասին:

Սակայն ամենից առաջ «ընդհանուր» ընտրական իրավունքը վոչ մի կապիտալիստական յերկրում իրոք ընդհանուր չէ: Ամեն տեղ աշխատավորների համար այդ իրավունքն ունի բազմաթիվ սահմանափակումներ: Ծառ կապիտալիստական յերկրներում «ընդհանուր» իրավունքի ժամանակ կանայք զրկված են ընտրելու իրավունքից. ել չենք խոսում կապիտալիստական բանակների զինվորների մասին, վորոնք առհասարակ հեռու յեն պահվում «իրենց» պետությունների քաղաքական կյանքին մասնակցելուց: Ամեն տեղ սահմանված և ստացվածքային ցենզ (ընտրել կարող են նրանք, ովքեր միայն վորոշ յեկամուտ ունեն, կամ վորեւ սեփականություն) և այլ տեսակ տասնավոր սահմանափակումներ:

Միմիայն բուրժուազիան կարող ե յայնորեն ոգտվել նախընտրական ազիտացիայի բոլոր միջոցներից: Նրա ձեռքին են գտնվում թերթերն ու հասարակական չենքերը, վորտեղ կաղմակերպվում են նախընտրական ժողովներ: Նա կարող ե հսկայական գումարներ ծախսել նախընտրական ազիտացիոն պլակատներին, թուղթիկներին և գրքերին վրա, մի բան, վոր, իհարկե, բանվոր դասակարգն այդ անելու միջոցներ չունի: Նա կարող ե վարձատրել իր ճառախոսներին, վորոնք դուրսերն ու քաղաքներն են գնում ազիտացիա մղելու համար: Նրան ե ի սպաս դրված նաև յեկեղեցին, վորի քարոզիչները, ոգտվելով աշխատավորների հետամնաց խավերի անգիտակցությունից, ձայներ են շահում նրանց չրջանում բուրժուազիայի ներկայացուցիչների համար: Բուրժուազիայի ձեռքին ե նույնպես դպրոցները, վորոնց միջոցով նա մթադնում ե աշխատավորների մատաղ սերունդների գիտակցությունը:

Այս բոլորից պարզ ե, վոր բանվորների համար դժվար ե պայքարել բուրժուական կուսակցությունների դեմ ընտրությունների ժամանակ: Բուրժուազիան իր ձեռքում ե պահում ընտրական մեքենան, վորովհետե նա կարող ե միջոցներ ծախսել ընտրությունների համար:

Այն ժամանակից, քանի գոյություն ունեն պարլամենտական հանրապետությունները, բազմաթիվ անգամ պարլամենտների ընտրություններ են կատարվել, սակայն ամեն անգամ այդ ընտրություններին միշտ բուրժուազիան ե հաղթող դուրս յեկել:

Անգլիական պարլամենտի վերջին ընտրությունները հաղթանակ բերին անգլիական «պնդաճակատներին» — պահպանողականներին (կոնսերվատորներին), այսինքն՝ ամենահետադեմ բուրժուական կուսակցությանը: Սակայն չե՞ր վոր «աղատ» Անգլիայում գոյություն ունի «ընդհանուր» ընտրական իրավունք, և բնակչության մեծամասնությունը կաղմում են բանվորներն ու աշխատավորները:

Իրականում իշխանության հարցը լուծվում ե վոչ թե պարլամենտական ձայնավությամբ, այլ զինված ապստամբությամբ և քաղաքացիական պատերազմով: Վոր իսկական դեմոկրատական հանրապետությունն ել վերցնենք (վորպիսիք այժմ արդեն առհասարակ չեն մնացել), այնտեղ բուրժուազիայի դիկտատուրան ե իշխում: Միմիայն զինված ձեռքով շահագործողների իշխանությունը խորտակելով և բուրժուազիայի պետական մեքենան ջախջախելով պրոլետարիատը կարող ե իր իշխանությունը, Որհնդային իշխանություն հաստատել:

Բանի գոյություն ունի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, քանի արդյունաբերության և գյուղատնտեսության տերերն են հանդիսանում կապիտալիստները, կալվածատերերը և կուլակները, այնքան ժամանակ բոլոր դեմոկրատական ազատություններն ազատություն կլինեն վոչ թե չքավորների, այլ հարուստների համար, վոչ թե աշխատավորների համար, վորոնք բնակչության մեծամասնությունն են կաղմում, այլ փոքրամասնության համար, շահագործողների—կապիտալիստների համար:

Իրականում բուրժուական դեմոկրատիան հանդիսանում ե բուրժուազիայի դիկտատուրայի քողարկված (թաղնված) ձևը, վորպես խարեյության գործիք, վորպես պրոլետարիատի և բոլոր աշխատավոր մասսաների վրա բուրժուական բռնության գործիք:

Ում ե ծառայում դեմոկրատիան կապիտալիստական պետության մեջ:

Համաշխարհային պրոլետարական հեղափոխության սկզբնապետությունում, մեր յերկրում բանվոր դասակարգի հաղթանակում, կապիտալի բոլոր յերկրներում պրոլետարիատի և բուրժուազիայի միջև դասակարգային պայքարի սրության առնչությունում բուրժուազիան սկսել է ամելի հաճախ ու բացարձակ բռնություն դործ գնել բանվոր դասակարգի ու աշխատավորների վրա. սկսել է ամելի հաճախ կիրառել ակնհայտնի տերորիստական դիկտատուրայի ուժերը:

«Ազատության, հավասարության և յեղբայրության» մասին դատարկախոսությունը բուրժուազիային քիչ է ողնում: Աշխատավորները հետզհետե ամելի յեն սկսում հասկանալ դեմոկրատական «ազատությունները» իսկական իմաստը: Գործադուլները, զործագործվողները ցույցերը և բանվոր դասակարգի մարտական յերևույթը բուրժուազիայի դեմ ամենորոյա յերևույթներ են դարձել կապիտալիստական յերկրներում: Գանի գնում ամելի ու ամելի յե յերկրում բուրժուազիայի տիրապետությունը:

Բուրժուազիայի տերորիստական գիկատուրան, հեղափոխական զերաճող շարժման դինամիկ ճնշումը, կոմունիստների ու իՍՀՄ նկատմամբ կատաղի հրահրումը, խտադուլն ջանքերն իրենց դինամիկ ջոկատների ողնությունում կործանել կոմկուլաակցությունները — ահա այս բոլորը հաստատում են, վոր բուրժուազիան անցնում է Ֆաշիզմին:

Ամբողջ մի շարք յերկրներ (Իտալիա, Հարավ-Ալալիա, Ռումինիա և այլն) արդեն վաղուց վերածվել են Ֆաշիստական պետությունների. իսկ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և մյուսները Ֆաշիստական պետություն դառնալու ճանապարհին են:

Ֆաշիզմի գլխավոր յնդիրն է պայքարել կոմունիստների դեմ: Գործադուլի հեղափոխական շարժումը բուրժուական պետություններում հայտնապես ճնշվում են վտատիկանություն, զորքերի ու Ֆաշիստական ջոկատների կողմից: Ցրում են կոմունիստական ժողովները: Գանդում են այն տպարանները, վորտեղ տրուվում են կոմունիստական թերթեր, իսկ թերթերը գրալվում են: Աշխատանքից հեռացնում են այն բանվորներին, վորտեղ յեղել են Մորհրդային Միության մեջ և վերադառնալուց հետո նրա մասին արդարություն են պատմել: Նրանք հեռացվում են նաև արհմիություններից և զանազան հեռապնդման են յենթարկվում:

Բանվորները կոմունիստական կուսակցությունների դեկավարությունում պայքար են մղում Ֆաշիզմի դեմ: Կոմկուսակցությունները հակահարված են տալիս Ֆաշիստներին, վորտեղ վորձում են խաբերալությունը իրենց կողմը գրավել աշխատավոր մասսաներին: Այնտեղ, վորտեղ բանվորներն ունեն ուժեղ կոմունիստական կուսակցություն, ինչպես որինալ՝ Գերմանիայում, այնտեղ Ֆաշիզմի դեմ պայքարը ծալալվում է հաջողությամբ:

Չիստական կուսակցություն, ինչպես որինալ՝ Գերմանիայում, այնտեղ Ֆաշիզմի դեմ պայքարը ծալալվում է հաջողությամբ: Ջեդ-ձեդի ամիս Ֆաշիստների հետ միասնաբար դործում են նաև բանվոր դասակարգի թշնամիներ՝ սոցիալ-Ֆաշիստները: Խոսքով իրենց հայտարարելով բանվորների բարեկամներ, հաճախ ձեռնալով (խոսքով, իհարկե) Ֆաշիզմի հակառակորդներ, բոլոր դույնի սոցիալ-Ֆաշիստներն ամբողջ իրենց ուժով հայտնապես պաշտպանում են բուրժուազիայի հարձակումը բանվոր դասակարգի դեմ, պաշտպանում են բուրժուազիայի տիրապետության Ֆաշիստական մեթոդները: Նրանք դեմ են դնում բանվորների դործադուլային պայքարին, ամակցում են բուրժուազիային իջեցնել բանվորների աշխատավարձը, ստորապես դրդում են կոմկուսակցությունների դեմ, ողնում են բուրժուազիային պայքարելու կոմունիստների դեմ: Նրանք բաժրապում են Մորհրդային Միության վրա հանդես գալով վորտեղ ամենաթունոց կողմնակիցներ Մորհրդային Միության դեմ ինտերվենցիային: Բավական է հիշել միայն Յերկրորդ Ինտերնացիոնալի դերը ուս մենչեիկների հակահեղափոխական կազմակերպությունը պաշտպանելու դործում, վոր բացվեց անցյալ տարի ՄՊԳՎ կողմից:

Ռուս մենչեիկներն այն մասը, վորն իր ժամանակին չվախալ արտասահման և թաղմեց խորհրդային մարմիններում, տարալ հակահեղափոխական աշխատանք մեք յերկրի ներսում:

Նրանք ստեղծել եյին մի հակահեղափոխական կազմակերպություն, վորը կոչվում եր «Խուսապանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Միութենական Բյուրո»: Այս կազմակերպությունը կապ եր պահում մյուս հակահեղափոխական կուսակցության կազմակերպության — Արդ-կուսակցության հետ, վորի մեջ մտնում եյին վտաարարները, զարական Ռուսաստանում յեղած զանազան ձեռնարկությունների նախկին տերերը և նրանց աղետները: Այլ յերկու կազմակերպությունները համաձայնության եյին յեղել նրանում, վոր պետք է վոչնչացնել Մորհրդային Իսխանությունը, սահմանել արյունխում ուղղական դիկտատուրա, դործարանները վերադարձնել կապիտալիստներին, իսկ հոգը՝ կալվածատերերին: Այդ դավադրությունը նրանք ցանկանում եյին իրականացնել ուս և ոտաբերկրյա ուղիտակ-գլխարդիականներ և կապիտալիստների ողնությունում: Սոցիալ-Ֆաշիստական Յերկրորդ Ինտերնացիոնալը, վորի մեջ են մտնում նաև արտասահման ըլլած ուս մենչեիկները, այդ հակահեղափոխական դավադրության ներջնդն ու վոգեւորդն եր:

Սոցիալ-Ֆաշիստներն այժմ հանդիսանում են բուրժուազիայի գլխավոր սոցիալական հեմարմար: Նրանք ողտադործելով իրենց աղդեցություն մնացորդները բանվոր դասակարգի հետամնաց

խաղերի վրա, ոչնչով են բուրժուական խեղդելու հեղափոխական շարժումը, փրկելու շահագործման, ստրկութեան կապիտալիստական սխտանքը վերահաս կորստից: Սոցիալ-Ֆաշիստներն իրենք չեն քաշվում ասելու, վոր իրենք իրենց խեղդին են համարում լինել կապիտալիզմի «բռնիչներ» (լիկարներ):

Ի՞նչ է փաշիզմը:

Ինչպիսի դեր ունեն այժմ սոցիալ-ֆաշիստները բուրժուական պետության մեջ: Ինչո՞ւ նրանք հանդիսանում են սոցիալ-ֆաշիստներ:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԶԱՆԶԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ
ՎՈՋՆԶԱՏՈՒՄԸ ՎՈՐՊԵՍ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻ

Քանի դեռ իշխանությունն ու պետությունը գտնվում են շահագործողների ձեռքին, վոչ մի դեմոկրատական ազատություն բուրժուական պետության շրջանակներում չի կարող ազատագրել բանվոր դասակարգին ու աշխատավոր մասսաներին՝ կապիտալիստների, կալվածատերերի և կուլակների լծից: Միայն պրոլետարական հեղափոխությունն է վոչնչացնում բուրժուազիայի իշխանությունը և ազատագրում և աշխատավորներին շահագործումից և ճնշումից:

Սակայն բուրժուական վոչ մի դեպքում չի դիջել և չի դիջի իր իշխանությունը բանվորներին, առանց ամենահարկու և ամենակատաղի կռվի: Նույնիսկ պրոլետարիատի կողմից խորտակված բուրժուական բոլոր ուժերով ու միջոցներով կաշխատի չես խլել իր տիրապետությունը: Այդ մասին են վկայում սարսափազարտ, քաղաքացիական պատերազմը, խնդիրները, բոկոտը, վնասարարությունը, ԽՍՀՄ դեմ նոր խնդիրները պատրաստությունը, համաշխարհային կապիտալի պայքարը մեր դեմ — Խորհրդային իշխանության բոլոր տարիների ընթացքում:

Բանվոր դասակարգը պետք է բռնի, դիմված ուժով խորտակի շահագործողներին, քաղաքացիական պատերազմում կոտորի հեղափոխության խորտակված կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրությունը, վոչնչացնի կապիտալի իշխանությունը վերականգնելու նրանց բոլոր փորձերը:

Դրա հետ միասին բանվոր դասակարգը պետք է վոչնչացնի պետական իշխանության բուրժուական հին ապարատը, վորն ամբողջովին հարմարեցված է աշխատավորներին ճնշելու և բուրժուազիայի տիրապետությունն ամրացնելու համար, պետք է քայքայի, առանց մնացորդի ավերի այդ ամբողջ ապարատը նրա բա-

նակի հետ միասին, նրա փոստիկանություն, բանները, դասարանի և վաճառված չինովներին հետ միասին:

«Պրոլետարիատի դիկտատուրան կառավարության փոխարինում չէ, այլ նոր պետություն, իշխանության նոր մարմիններով կենտրոնում և տեղերում, պրոլետարիատի պետություն, վոր բարձրանում է հին պետության, բուրժուազիայի պետության ավերակների վրա» (Ստալին):

Պրոլետարիատը կապիտալիստական պետական ապարատը պետք է փոխարինի իր իշխանության նոր մարմիններով, իր պրոլետարական պետական ապարատով: Այդ նոր պրոլետարական պետության խնդիրներն են բռնի կերպով ճնշել բուրժուական, հաղթակերպել մասսաներին բանվոր դասակարգի շուրջը՝ սոցիալիզմը կառուցելու համար, մյուս յերկրների պրոլետարիատի հետ կապն ամրացնելու համար, համայն աշխարհում պրոլետարական հեղափոխության դարձացման ու հալածանքի համար:

«ԲՈՒՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ, ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ ԶԱՐԴԵԼՈՒ ՈՐԵՆՔԸ, ՎՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ, ԱՇԽԱՐՀԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԱՆՈՒՍԱՓԵԼԻ ՈՐԵՆՔՆ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ» — ցույց էր տալիս ընկ. Ստալինը:

Ինչո՞ւ պրոլետարիատը, իշխանությունն իր ձեռքը վերցնելով, պետք է վոչնչացնի հին պետական ապարատը և ստեղծի իր պրոլետարական պետությունը:

Ի՞ՆՉ Ե ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՎՈՐՈՐԴ ԵՆ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1917 թ. հոկտեմբերին հաստատված Խորհրդային իշխանությունը պրոլետարիատի դիկտատուրան է:

Իսկ ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան: Իսկական իմաստով դիկտատուրա նշանակում է անսահման իշխանություն, վորը հենվում է անմիջապես ուժի վրա:

«ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՈՐԵՆՔՈՎ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՅԵՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԵՆՎՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՎՐԱ ՎՈՐՊԵՍ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՏՎՈՒՄ Ե ԱՇԽԱՐՀԻ ՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ», — ասում էր Լենինը:

Սակայն, ինչպես լինիլիցմ է սովորեցնում, միայն բռնությամբ չի սպառնում պրոլետարիատի դիկտատուրայի ելույթը:

նը, թեև առանց բանալիքի գրկատառերի գոյություն ունենալ է/ կարող:

Պրոլետարիատի գրկատառերն ունի յերեք գլխավոր խնդիր, յերեք հիմնական կողմ, և

«ՄԻԱՅՆ ԱՅԴ ԶԵՐԵՔ ԿՈՂՄԵՐԸ ՄԻԱՍԻՆ ՎԵՐՑՐԱԾ ՏԱԼԻՍ ԵՆ ՄԵՋ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԳԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԼԻԱԿԱՍԱՐ ՅԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ» (Ի. Ստալին):

Պրոլետարական գրկատառերային յերեք հիմնական կողմերը, հնչյուն ընկ. Ստալինն և ասում

«1) ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Ե՝ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՃՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐԵՐԻ ՊՐՈԼԵՏԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՍԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ ՀԵՂԱԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ:

2) ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Ե՝ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԲՈՒՐժՈՒԱԶԻԱՅԻՅ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԿՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՅԴ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՅԴ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՅ ԱՅԴ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

3) ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Ե՝ ՍՈՑԻԱԼԻՋՄԸ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՎՈՋՆՁԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ — ԱՌԱՅ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

Պարզ և, վոր այդպիսի խնդիրները կարճ ժամանակում — մի քանի տարում — կատարել էի կարելի: Այդ պատճառով պրոլետարիատի գրկատառերն իրենից ներկայացնում և՛

«ԱՄԲՈՂՋ ՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՊՈՒՆ, ԼԻ ԴԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ, ՀԱՄԱՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՏԸՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՆԱՀԱՆՋՆԵՐԻ, ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՊՈՒՆ» (Ի. Ստալին):

Պրոլետարական գրկատառերային գոյությունը մեր յերկրում հսկայական նշանակություն ունի համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործի համար: Նա հանդիսանում և կարևորագույն պայման շահագործողների իշխանությունը տապալելու

համար բոլոր կապիտալիստական յերկրներում և պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար ամբողջ աշխարհում: ԽՍՀՄ պրոլետարիատը, իշխանությունն իր ձեռքը վերցնելով, վճռական հաղթանակներ տանելով սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում, իր փորձով, իր որինակով սովորեցնում և բոլոր յերկրների պրոլետարիատին և աշխատավորներին, թե ինչպես պետք և պայքարել շահագործողներին իշխանությունը խորտակելու համար: Համայն աշխարհի պրոլետարիատն ու աշխատավորները, հանձինս Սոցհրդային Միության, ունեն իրենց հուսալի հենարանը բուրժուազիայի դեմ մղվող իրենց պայքարում: Յե՛վ հենց այդ և պատճառը, վոր Սոցհրդային Միությունը հանդիսանում և համաշխարհային պրոլետարիատի հայրենիքը: Յե՛վ դրա հետ միասին ԽՍՀՄ հանդիսանում և զաղութների և կախյալ յերկրների աշխատավորների հենարանը՝ իմպերիալիզմի դեմ մղվող նրանց պայքարում:

Պրոլետարիատի գրկատառերն պարզապես ունի դասակարգային բնույթ: Բուրժուազիայի նման պրոլետարիատը կարելի չունի թաղանթներ իր տիրապետության դասակարգային բնույթը: Բանվոր դասակարգը բացարձակապես հայտարարում և, վոր պրոլետարական պետության մեջ անց և կացնում պրոլետարիատի գրկատառեր, վորն անխնայ ծնում և շահագործող դասակարգերի դիմադրությունը, կատարելապես վոջնացնելով նրանց: Դասակարգային ճրջմարտությունը — այդ ամենաուժեղ զենքն և բանվոր դասակարգի ձեռքին: Այդ զենքի ողնույթամբ բանվոր դասակարգը մերկացնում և բուրժուազիայի ստախոսությունն ու խաբեբայությունը, բաց և անում բոլոր աշխատավորների աչքերը՝ տեսնելու բուրժուական պետության իռլական բնույթը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԳԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ ՈՒՍՐՈՒՆՔԸ — ԴԼԵԱՎՈՐՆ Ե ԼԵՆԻՆԻՋՄԻ ՄԵՋ:

Ինչո՞ւմ և պրոլետարիատի գրկատառերային դասակարգային ելուքյունը:

Վորո՞ւմ և պրոլետարիատի գրկատառերային հիմնական խնդիրները:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարիատի գրկատառերն բուրժուական դեմոկրատիան պրոլետարական դեմոկրատիայով փոխարինումն և: Մենք արդեն գիտենք, թե զործնականում ինչ և իրենից ներկայացնում բուրժուական դեմոկրատիան և թե ինչ արժեն բուրժուական դեմոկրատիան «աղատությունները»: Պրոլետարական դեմոկրատիան

տարբերվում և բուրժուականից այնպես, ինչպես յերկինքը յերկրից:

Հոկտեմբերի տասներորդ տարեդարձի տոնակատարութեան առթիւ մեր Միութեանը ժանամած ոտարեկրկա բանվոր պատգամաւորները կողմից ընկ. Ստալինին տրված հարցերի մէջ կար նաև այսպիսի հարց՝ «ինչո՞ւ ԽՍՀՄ-ում չկա մամուլի ազատութիւն»: Ընկ. Ստալինն ամենից առաջ հարցրեց պատգամաւորներին. ի՞նչի մասին և խոսքը, մամուլի ազատութիւն՝ ո՞ւմ համար, վո՞ր դատակարարի համար:

«Յեթե ԽՍՀՄ-ը ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ե, — ասաց ընկ Ստալինը, — ԱՅՌՈՒՄԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ ՄԵԶԱՆՈՒՄ ՅԵՎ ԶԻ ԼԻՆԻ, ԲԱՆԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ: ԻՍԿՅԵԹԵ ԽՍՀՄ-ը ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱՐ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ե, ՅԵՍ ՊԵՏԳ Ե ԱՍԵՄ, ՎՈՐ ԴՈՒՔ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԶԵՔ ԳՏՆԻ ՄԻ ՈՒՐԻՇ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՎՈՐՏԵՂ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱՐ ՄԱՄՈՒԼԻ ԱՅՆՊԻՍԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՅԵՎ ԼԱՅՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՎՈՐՊԻՍԻՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԽՍՀՄ-ում»:

Ընկ Ստալինի այդ պատասխանում չափազանց պայծառ կերպով լուսարանված և մեր պրոլետարական դեմոկրատիայի էությունը, վորպես հոկայական մեծամասնութեան դեմոկրատիայի, պրոլետարիատի դիկտատուրան ամրացնող դեմոկրատիայի, վորպիսի դիկտատուրան հանդիսանում և Հոկտեմբերի անբաժան նվաճումը:

Սորհրդային իրավակարգն ապահովում և իսկական դեմոկրատիան աշխատավորների համար: Մեր տպարանները տպում են միլիոնավոր թերթեր և դրքեր, վորոնք հզոր դործիք են կուլտուրական հեղափոխութեան համար: Լավագույն շենքերը հատկացված են խորհուրդների համադրումարների, բանվորների ու կոլտնտեսականների, ախումբների համար: Դպրոցից դուրս և քշված տերտերական քարոզը, վորը չլմեցնում եր յերեխաների ուղեղները: Կանայք հաճախ իրավունքներ ունեն տղամարդկանց հետ: Բոլոր ազգութիւններն իրավահաւասար են, ապրային ճշնշումից հետք անդամ չի մնացել:

Այս և իսկական ազատութիւնն աշխատավոր մասսաների համար, և վոչ թե ստատու բուրժուական «ազատութիւնը», վորն ապահովում և կապիտալիստների տիրապետութիւնը:

Ամեն կերպ զարգացնելով դեմոկրատիան աշխատավորների համար, պրոլետարական դիկտատուրան յերբեք ազատութիւն չի տալիս չահագործող դատակարարների մնացորդներ — հակահեղափոխական մենչևիկներին և տրոցկիստներին, վորոնք հանդիսանում են հակահեղափոխական բուրժուազիայի արտաքին վոր շոկատը:

ՄԵՐ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՅԵ:

«Խորհրդային, այսինքն՝ պրոլետարական դեմոկրատիզմի սոցիալիստական բնույթը նրանում և, — ասում և լենինը, — առաջինը՝ վոր ընտրողներ են հանդիսանում աշխատավորներն ու շահագործվող մասսաները, բուրժուազիան բացառվում է. յերկրորդ՝ վոր վերանում են ընտրութիւնների ամեն տեսակ բյուրոկրատական ձևականութիւններն ու սահմանափակումները, մասսաներն իրենք են վորոշում ընտրութիւնների կարգն ու ժամկետները, ընտրվածներին յիովին յետ կանչելու ազատութեամբ. յերրորդ՝ վոր ստեղծվում և աշխատավորների, խոշոր-արդյունաբերական պրոլետարիատի ավանգարդի լավագույն մասսայական կազմակերպութիւն, վորը հնարավորութիւն և տալիս նրան դեկավարելու շահագործվողների ավելի լայն մասսաներին, ներգրավելու նրանց ինքնուրույն քաղաքական կյանքի մեջ, դաստիարակելու նրանց քաղաքականացնելու, նրանց իսկ սեփական փորձի վրա, — վոր այդպիսով առաջին անգամ ակիզը և դրվում այն բանին, վորպեսզի իսկապես բնակչութիւնը գլխովին սովորի կառավարել և սկսի կառավարել»:

Բանվորական դեմոկրատիայի կարևորագույն մասը կազմում և պրոլետարական ինքնաբերականութիւնը, վորը հանդիսանում և մեր կուսակցութեան և Սորհրդային իշխանութեան ուժի հատկանիշը: Ինքնաբերականութեան միջոցով կուսակցութիւնը մոբիլիզացիայի յե յենթարկում աշխատավոր լայն մասսաներին՝ պայքարելու ոպորտունիստների և բյուրոկրատների դեմ, վորոնք խանդարում են սոցիալիզմի հաջող շինարարութիւնը:

Մեր յերկրում յուրաքանչյուր աշխատավոր վորպես տեր պետք և վերաբերվի ամեն մի դործի: Անհրաժեշտ և վոչ միայն ինքն աշխատի, այլև պետք և հետաքրքրվի մյուսների աշխատանքով: Միմեն անդամ, մեր ժողովրդական տնտեսութեան և դեկավարութեան բոլոր ասպարեզներում պետք և վճռականորեն պայքարել բոլոր թերութիւնները, խոցերը և խեղաթյուրումներն արմատախիլ անելու համար: Ինքնաբերականութիւնն և, վոր հայտաբերում և այդ թերութիւնները, ջրի յերես և հանում բոլոր ոպորտունիստներին ու բյուրոկրատներին և հեշտացնում և պայքարը նրանց դեմ: Ինքնաբերականութիւնը մասսաներին սովորեցնում և հետեւ տնտեսական ու պետական ապարատի աշխատանքին, առաջ և քաջում նոր միլիոնավոր աշխատավորների պետութեան և տնտեսութեան դեկավարման մեջ: Ինքնաբերականութիւնը կարեւորագույն միջոց և պրոլետարիատի ձեռքին, վորի ոգնութեամբ սոցիալիստական շինարարութիւնն աղատվում և բոլոր խոչընդոտներէր, բոլոր թերութիւններէր:

«ԻՆՏԵՆՍԻՎԱՅԻՆ ՊԵՏԱՌԹՅՈՒՆԸ, — ասում է ընկ. Ստա-
լինը, — ՄԵՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՌԱՋ ՏՄՆՈՂ ԱՄԵՆԱԼՈՒԲՋ
ՌԻՃԵՐԻՑ ՄԵԿԸ ՊԵՏՏԻ Ե ԼԻՆԻ»:

Պարզ է, վոր վոչ ամեն տեսակ քննադատությունն է ծառա-
յում Սորհրդային իշխանության ամրացման գործին, սոցիալիզ-
մի շինարարության գործին: Մեր դասակարգային թշնամիները,
այդ թվում նաև հակահեղափոխական տրոցկիստներն ու դասա-
կարգային թշնամու աջակիցներ — բոլոր տեսակի ուղորդողներն
նույնպես «քննադատում են» մեր շինարարությունը, մեր
աշխատանքը: Այդ «քննադատությունն» նպատակն է քանդել մեր
պրոլետարական պետության հիմքերը, պայթեցնել սոցիալիզմի
շինարարությունը: Այդ թշնամական քննադատությունը վոչ մի
ընդհանուր բան չունի պրոլետարական ինքնաքննադատության
հետ: Այդ պատճառով դասակարգային թշնամիներն ու ուղորդու-
նիստները, վորոնք թաղնվում են ինքնաքննադատության լողուն-
դի տակ, մեր աշխատանքը քայքայելու լողունդի տակ, պետք է
հանդիպեն և հանդիպում են անխնայ հակահարվածի մեր կուսակ-
ցության, բոլոր բանվորների ու աշխատավորների կողմից: Պրո-
լետարական ինքնաքննադատության կարևորագույն խնդիրներից
մեկն է ամբողջ վճռակաճություն մերկացնել և ջախջախել այդ
հակահեղափոխական և ուղորդողներական փորձերը, վոր ինք-
նաքննադատության լողունդն ոգտադրվում են պրոլետարական
դիկտատուրայի, սոցիալիզմի դեմ պայքարելու համար:

Ինչո՞ւմ է պրոլետարական դեմոկրատիայի էությունը:
նր: Ինչո՞վ է նա տարբերվում բուրժուական դեմոկրատիա-
յից:

Ի՞նչ է պրոլետարական ինքնաքննադատությունը և ին-
չո՞ւ յե նա մեզ հարկավոր:

ՀԱՄԿ(Բ)Կ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե

Պրոլետարական պետության ղեկավարությունը բանվոր դա-
սակարգն իրականացնում է իր առաջավոր ջոկատի — կոմու-
նիստական կուսակցության միջոցով:

Առանց կոմունիստական կուսակցության ղեկավարության
հնարավոր չէր լինի վոչ Հոկտեմբերյան հաղթանակը, վոչ պրո-
լետարիատի դիկտատուրան և վոչ սոցիալիզմի հաղթանակի շի-
նարարությունը:

Իր ժամանակին բուրժուազիան փորձում էր չեղել աշ-
խատավորներին ճիշտ ճանապարհից, լողունդ առաջադրե-
լով՝ «խորհուրդներն առանց կոմունիստների»: Բուրժուա-
զիան այս առաջարկությունն անում էր նրա համար, վոր-
պեսզի քայքայի խորհուրդները և պրոլետարական դիկտա-

տուրան: 1921 թ. բուրժուազիան այդ լողունդով հաղթա-
կերպեց Կրոնշտադտի խռովությունը: Կապիտալիստները
չափ լավ են հասկանում, վոր չի կարելի խորտակել պրո-
լետարական դիկտատուրան, յերբ մասսաներն են գնում
կոմունիստների յետևից:

«ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ, — ասում է Լենինը,
— ՀԱՄԱՌ, ԱՐՅՈՒՆՈՑ ՅԵՎ ԱՆԱՐՅՈՒՆ, ԲՈՒՆԻ ՈՒ ԽԱ-
ՂԱՂ, ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՅԲԱՐ Ե ՀԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ-
ՃԵՐԻ ՏՐԱԴԻՑԻԱՆԵՐԻ ԴԵՄ... ԱՌԱՋ ՅԵՐԿԱԹԵ,
ՊԱՅԲԱՐՈՒՄ ԿՈՓՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋ ՏՎՅԱԼ
ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶՆԻՎ ՏԱՐՐԵՐԻ ՎՍՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱ-
ՅԵԼՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋ ԱՅՆՊԻՍԻ ԿՈՒՍԱԿ-
ՑՈՒԹՅԱՆ, ՎՈՐԸ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ Ե ՀԵՏԵՎԵԼ ՄԱՍՍԱՆԵ-
ՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՅԵՎ ԱԶՆԵԼ ՆՐԱ ՎՐԱ, ԱՆ-
ՀՆԱՐ Ե ՆՄԱՆ ՊԱՅԲԱՐ ՄՂԵԼ»:

Կուսակցությունը հանդիսանում է պրոլետարիատի դիկտա-
տուրայի հիմնական ղեկավար ուժը: Նա ընդգրկում է պրոլետա-
րիատի բոլոր մասնախմբական կազմակերպությունների աշխատան-
քը. այդ կազմակերպությունների ողնուկն է, վոր կենսա-
գործվում է դիկտատուրայի մարմինների ամենորոշ աշխատան-
քը: Պրոլետարիատի դիկտատուրան այդ բոլոր կազմակերպու-
թյունների գործողություններն ուղղում է մի ընդհանուր նպա-
տակի, այն է՝ սոցիալիզմի կառուցմանը մեր յերկրում և պրո-
լետարական հեղափոխության հաղթանակին ամբողջ աշխարհում:

Ընկ. Ստալինն այսպես է բնորոշում պրոլետարիատի դիկ-
տատուրայի սխեման և կուսակցության դերն այդ սխեմում:

«ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, վորպես պրոլետարիատի
մասնաշաղկապ կազմակերպություն, վոր կապում է կուսակ-
ցությունը դասակարգի հետ, ամենից առաջ արտադրական
գծով. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, վորպես աշխատավորների մաս-
նաշաղկապ կազմակերպություն, վորը կապում է կուսակցու-
թյունը վերջինների հետ մալս և առաջ պետական գծով.
ԿՈՌԴԵՐԱՑԻԱՆ, վորպես մասնաշաղկապ կազմակերպություն,
գլխավորապես վորպես գյուղացիության կազմակերպու-
թյուն, վորը կապում է կուսակցությունը գյուղացիական
մասնաների հետ, ամենից առաջ՝ տնտեսավարական գծով,
գյուղացիությունը սոցիալիստական շինարարության մեջ
գրավելու գծով. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄՈՒՈՒԹՅՈՒՆԸ,
վորպես բանվորների ու գյուղացիական յերիտադրության
մասնաշաղկապ կազմակերպություն, վորը կոչված է հեշտա-
ցելու պրոլետարիատի ավանգարդին նոր սերնդի սոցիալիս-
տական դաստիարակությունը և մշակել յերիտադրող ու-



գերվներ. և վերջապես ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, վերջին
ուղղութիւնն նվազ հիմնական ուժ պրոլետարիատի
դիկտատուրայի սիստեմում, վեր կոչված է դեկտարել այդ
բոլոր կազմակերպութիւնները,—այսպէս է առհասարակ
դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի
դիկտատուրայի սիստեմի» պատկերը:

Պրոլետարիատի մասսայական կազմակերպութիւնները, որն
է՝ արհմիութիւնները, խորհուրդները, կոոպերացիան, կոմիտե-
րիտմիութիւնը, դրանք՝

«ԼԵՍԱԿՆԵՐԸ ԿԱՄ ՓՈԿԵՐՆ ԵՆ, ԱՌԱՆՅ ՎՈՐՈՇ ՈՒ-
ՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՆԱՐԻՆ Ե ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԻՐԱԴՐՈՒ-
ՄԸ» (Ի. Ստալին):

Սակայն այդ լծակները պետք է շարժման մեջ դնել, պետք է
հշտորեն ու հմտորեն ղեկավարել այդ լծակները: Հենց այդպիսի
ուղղութիւնն ունի ուժն եւ հանդիսանում է կոմունիստական կու-
սակցութիւնը, վորպէս՝

«Պրոլետարիատի առաջավոր ջոկատ, նրա ավանգարդը,
վորը համդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի հիմ-
նական ղեկավար ուժը» (Ի. Ստալին):

Մեր կուսակցութիւնն ունի ամենամեծ, վոչ մի բանի հետ
համեմատելի հեղինակութիւն աշխատավոր լայն մասսաների
չրջանում: Մեր կուսակցութիւնն լենինյան քաղաքականութիւնը
է նրա յոյունդներն ողջովում են անդուգական պաշտպանութիւն
մեր յերկրի ու համայն աշխարհի բանվոր դասակարգի ու բոլոր
աշխատավորների կողմից: ԽՍՀՄ բանվոր դասակարգն ու աշխա-
տավորներն իրենց փորձով համոզվել են, վոր առանց կուսակցու-
թիւնի, վորպէս հիմնական ղեկավար ուժի, անհնար է պրոլետա-
րիատի դիկտատուրայի հաստատուն գոյութիւնը, անհնար է
սոցիալիզմի հաղթական շինարարութիւնը:

Ինչո՞ւ անհրաժեշտ է կոմունիստական կուսակցութեան
ղեկավարութիւնը պրոլետարիական պետութեան մեջ:

Կուսակցութիւնը վո՞ր կազմակերպութիւնների միջո-
ցով է իրագործում իր ղեկավարութիւնը պրոլետարիատի
դիկտատուրայի սիստեմում:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԲԱՐԸ ԽՍՀՄ-ՈՒՍ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ԵՏԱՊՈՒՄ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԲԱՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ
ԺԱՄԱՆԱԿ

Պրոլետարիատի դիկտատուրան հաստատելուց հետո դառա-
նալից պայքարը վոչ միայն դադարում է, ինչպէս այդ հաս-
տատում են ալ ոպորտունիստները, այլ ե՛լ ավելի յն սրվում,
բնդունելով նոր ձևեր:

«ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ,— ասում է ԼԵՆԻՆԸ,
— ՅԵՐԿԱՐԱՏԵՎ, ԴժՎԱՐԻՆ, ՀԱՄԱՌ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՊԱՅԲԱՐԻ ԳՈՐԾ Ե, ՎՈՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԽՈՐՏԱԿԵԼՈՒՅ ՀԵՏՈ, ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆ ՍՎԵՐԵԼՈՒՅ ՀԵՏՈ, ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒ-
ՐԱ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՅ ՀԵՏՈ ԶԻ ԱՆՀԵՏԱՆՈՒՄ... ԱՅԼ ՓՈ-
ԽՈՒՄ Ե ԻՐ ԶԵՎԵՐԸ, ՇԱՏ ՏԵՍԱԿԵՏՆԵՐՈՎ ԴԱՌՆԱԼՈՎ
Ե՛Ղ ՍՎԵԼԻ ԿԱՏԱՂԻ»:

Բաղադրական պատերազմի ճակատներում պարտութեան
հրելով, միջադպին և ուսական բուրժուազիան անցել է պար-
ջարի նոր ձևերի հաղթող պրոլետարիատի դեմ, ձգտելով քա-
ղայն հաղթական սոցիալիստական շինարարութիւնը:

Միջադպին լծակներով չի խնայել և չի խնայում վոչ
դրամ, վոչ ուժ դասակարգային թշնամիներին ոժանդակելու հա-
մար մեր յերկրում, կազմակերպելու հակահեղափոխական զնա-
տարարական խմբեր:

Վնասարարները ձգտում էին խորտակել պրոլետարիատի
դիկտատուրան մեր յերկրում, վերականգնել կապիտալիստական
իրավակարգը: Նրանք ձեռք ու ջանք էին դրած դնում խղելու
մեր շինարարութիւնն պլանները, խանգարելու դործարանների ու
Ֆաբրիկների աշխատանքը, փչացնում էին մեքենաներն ու հան-
քահորերը, քայքայում էին յերկաթուղային տրանսպորտը, ջա-
տում էին բանվորական մատակարարումը:

Այդպիսով, նրանք ցանկանում էին պայթեցնել պրոլետա-
րիատի դիկտատուրայի ամրոցը, կառնեցնել սոցիալիստական շի-
նարարութիւնը, թուլացնել մեր Միութեան պաշտպանականու-
թիւնը և այդպիսով հող պատրաստել ինտերվենցիայի համար:

Պրոլետարիական հաղթական հեղափոխութեամբ զլված ու
ջախջախված ուս արդյունաբերողները, վորոնց պաշտպան եր
կանգնած Յրանսական զլխավոր շտաբը, անդու ու անդադար աշ-
խատում էին նոր ինտերվենցիայի պլանները կազմելու վրա:

պատրաստում էին խորհրդային Միությանը վերածել միջազգային իմպերիալիզմի դադութի:

Արդևուսակցության և մենչևիկների դատավարություններն ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ հայտարարելով միջազգային իմպերիալիզմի և նրա ազնեությունը՝ բուրժուական ինտելիգենցիայի մնացորդների, նեպոմանների, կուլակների ու մենչևիկների հակահեղափոխական ինտելիգենցիան պլանները, պարզորոշ ցույց տվին, Վոր անհրաժեշտ և ունենալ մեծագույն դատարարական զգոնություն, Վոր դատակարարային պայքարը դեռևս չի դադարել, Վոր դատակարարային թշնամիները, զեպի հատակ խորատուղիելով, կատաղի զիմադրություն են ցույց տալիս սոցիալիզմի հարձակմանը:

Դատակարարային թշնամիներ՝ միջազգային բուրժուազիայի, կուլակների, նեպոմանների, մենչևիկների և բուրժուական ինտելիգենցիայի հակահեղափոխական մասի դեմ հաջող պայքարի կառուցողուն պայմանն և հանդիսանում է բանվոր դատակարարի անբաժանելի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ՝ աղբ դաշինքում բանվոր դատակարարի ու նրա կուսակցության ղեկավար գերի հիման վրա:

Վիկտատուրայի մեծագույն սկզբունքը, — գրում են Լենինը, — այդ պրոլետարիատի դաշինքի պանպանունն է գյուղացիության հետ:

Մակայն մեղ պե՞տք է արդյոք ամեն տեսակ դաշինք գյուղացիության հետ: Վո՛չ: Պրոլետարիատն իրադործում է աշխարհի դաշինքը գյուղացիության հետ, Վորն ամրացնում է պրոլետարիատի զինատուրան, ապահովում է հաղթական սոցիալիստական շինարարությունը, տանում է դեպի դատակարարների կատարելապես վոչնչացում:

Մանր, բաժան-բաժան գյուղացիական արտադրությունն անընդհատ առաջացնում է և չի կարող չառաջացնել իր միջից կուսակցությունը: Այդ պատճառով տնտեսական հիմքի, կապիտալիզմի արձանները վոչնչացնելու միակ միջոցը սոցիալիստական վերակառուցումն է, գյուղատնտեսության համատարած կուլեկտիվացումը և այդ հիման վրա կուլակության վերացումը՝ Վոր պես դատակարար:

Վերջին հաշվով մեր Հանրապետության բախտը կախված կլինի նրանից, քե կգնա՞ արդյոք գյուղացիական մասնակցությամբ դատակարարի յետևից, քե վաչ, մնալով հավատարիմ դաշինքին նրա հետ, քե նա կտա «նեպոմանների», ալոսինն՝ նոր բուրժուազիային, իրեն կանջատի բանվորներից, կերամարվի նրանցից, — գրում են Լենինը:

Յեթե պրոլետարիատը կկարողանա ստեղծել հզոր սոցիալիստական ինդուստրիա, Վորն ընդունակ լինի գինեղու գյուղացիությանը:

տնտեսությունն առաջավոր տեխնիկայով, յեթե կկարողանա փորձով, որինակով ու համոզմամբ ապացուցել աշխատավոր դյուղացիությանը հողատիրության կուլեկտիվացման առավելությունները և իր յետևից տանել գյուղացի-չքավորների ու միջակների սոցիալիստական ուղիով, — այն ժամանակ սոցիալիզմի դործը իՍՂՄ-ում կհաղթի հաստատ և անվերադարձ կերպով: Հակառակ դեպքում, կուլակային-կապիտալիստական տարրերը կհաղթեն, և սոցիալիզմի դործը տանուլ կտանը: Այսպես են գնում հարցը մեր կուսակցությունը:

Մեր կուսակցության լենինյան ճիշտ քաղաքականությունը, կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ, ապահովեց բանվոր դատակարարի վճռական հաղթանակները դատակարարային թշնամիների դեմ:

Բանվոր դատակարարը, հենվելով չքավորության վրա, պահպանեց ու ամրացրեց իր դաշինքը միջակի հետ և նվաճեց միջակի վճռական չքավարձը դեպի սոցիալիզմի կողմը 1929 թ.: Դեպի սոցիալիզմը միջակի աղբ հաստատ չքավարձը հաջողվեց նվաճել նախ և առաջ նրա համար, Վոր բանվոր դատակարարը վճռական պայքար են տանում կուլակության դեմ, սահմանափակելով և նեղելով նրան, իսկ 1929 թ. յերկրորդ կիսից անցավ կուլակության վերացման քաղաքականությանը՝ Վորպես դատակարար՝ համատարած կուլեկտիվացման հիման վրա:

Կուլակությունը միջազգային բուրժուազիայի, մենչևիկների, կոսերների, բուրժուական գիտնականների (կոնդրատովի նման) ոգնությունամբ մուրիլիզացիայի յենթարկեց բոլոր ուժերը՝ պահելու չքավորին ու միջակին մենատնտեսական, բաժան-բաժան տնտեսության դիրքերում, դրպարտելու կոլտնտեսություններին աշխատավոր գյուղացիության աչքում, խզելու չքավորների և միջակների վստահությունը դեպի բանվոր դատակարարը:

Համկ(բ)Կ կողմից ղեկավարվող բանվոր դատակարարը հաղթահարեց դատակարարային թշնամիների զիմադրությունը, այն և՛ կուլակների, նեպոմանների և նրանց հավատարիմ ոգնականներ՝ մենչևիկների ու հակահեղափոխական արոցիկոսների դիմադրությունը: Խորհրդային Միության բանվոր դատակարարը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք է ցրել համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ:

ԻՍՂՄ թեակոխել է սոցիալիզմի ժամանակաշրջանը և ավարտել է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը 1931 թվին: Արժանապես փոխվել է դատակարարային ուժերի հարաբերակցությունը մեր յերկրում:

Ինչո՞ւ յե սրվում դատակարգոյին պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ:

Ի՞նչ ձևեր են ընդունում դատակարգային պայքարը:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐՃԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՏԱՊՈՒՄ

Ամենից առաջ աճել է բանվոր դասակարգի հզորությունը, վորի շարքերն անընդհատ խտանում են և ամրանում:

Արհմիություններն այժմ ընդգրկում են իրենց մեջ 18 միլիոնից ավելի բանվորներ և ծառայողներ: 1923 թվի հետ համեմատած բանվոր դասակարգն աճել է յերեք անգամ: Ար-որի վրա աճում են հարվածայինների բանակները, տաղավոր մարտիկների բանակները սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում. նրանց թիվն արդեն հասել է 3 և կես միլիոն արդյունաբերի: Միության ամենահեռավոր անկյուններում ստեղծվել են բանվոր դասակարգի բաղձամիլիոն նոր ջոկատներ: Գյուղում խորհրդատեսությունների և մեքենա-տրակտորային կայանների շինարարության հետ կապված աճում են գյուղատնտեսական պրոդուկտների կադրերը: Կոմբայնավարները, արակտորիստները և դաշտավարների թիվը հասնում է արդեն 3 միլիոն մարդու:

Ներկայումս, յերեք չքավորների և միջակների բաղձամիլիոն մասսաները համոզվել են, վոր կոլտնտեսություններն ավելի առավելություններ ունեն անհատական տնտեսությունների հանդեպ, վճռականորեն և անդադրձ կերպով սոցիալիստական ճանապարհն են բռնել, է՛լ ավելի յե ամրացել բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ: Ամբողջովի ու ընդլայնվել է խորհրդային իշխանության հիմքը, վորի համար այժմ գյուղում հիմնական ու գլխավոր հենարան է հանդիսանում կոլտնտեսական գյուղացիությունը: Կոլտնտեսական գյուղացիությունը հողադորձության կենտրոնական դեմքն է դարձել: Այժմ արդեն կոլեկտիվացած է գյուղացիական ծխերի 62 տոկոսը:

